



**PARTNERSHIP  
FOR OPEN SOCIETY**

**Համատեսակի**

10-ը փետրվարի, 2011 թ.

## Հայաստանի սին խոստումները արտահայտվելու ազատության վերաբերյալ

Մինչ թվային հեռուստատեսությանն և ռադիոյին անցում կատարելու՝ կառավարության ընդունած նոր ռազմավարության կապակցությամբ մտավախություններն ահագնանում են, «Մամուլի ազատության» հետազոտության վերջին հրատարակության մեջ Հայաստանի լրատվամիջոցների դաշտը բնորոշվել է որպես խիստ քաղաքականացված և գործելու համար բարդ: Հետազոտության արդյունքները վկայում են, որ 2010 թվականի ընթացքում Հայաստանը պահպանել է մամուլի ազատության ցուցանիշով «ոչ ազատ» պետության կարգավիճակը, որի հետևանքով հարցականի տակ է հայտնվում կառավարության հավատարմությունը լրատվամիջոցների բազմակարծության և արտահայտվելու ազատության արժեքներին: Թվայնացման իրագործման ռազմավարության մշակումից և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների ընդունումից գրեթե մեկ տարի անց «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնությունը պատրաստ է գնահատել անկախ լրատվամիջոցների և լրատվական դաշտի ընդհանրական միտումների նկատմամբ Հայաստանի կառավարության ներկայիս մոտեցումը: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության («ԵԱՀԿ») համահովանավորությամբ անցկացված միջոցառման շրջանակներում «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնությունը կազմակերպեց քննարկում, որի ընթացքում լրատվական ոլորտի առաջատար փորձագետները մանրամասնորեն լուսաբանեցին լրատվամիջոցների ազատության հիմնախնդիրները և ներկայացրեցին մանրակրկիտ առաջարկություններ ոլորտի քաղաքականության վերաբերյալ: Փորձագետների կազմում էին Մեսրոպ Հարությունյանը («Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե»), Անդրեյ Ռիխտերը («Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Լրատվական իրավունքի և քաղաքականության կենտրոնի տնօրեն»), Քրիստիան Մյոլերը (Եվրոպայի խորհրդի փորձագետ), Լևոն Բարսեղյանը (լրագրողների «Ասպարեզ» ակումբի նախագահ), պրն. Աշոտ Մելիքյանը («Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի» նախագահ), Աննա Իսրայելյանը («Առավոտ» օրաթերթի լրագրող), Արտակ Զեյնալյանը (ռազմավարական դատավարության փորձագետ): Վերանայված օրենսդրության շուրջ քննարկմանը մասնակցեց նաև Հանրային խորհրդի ներկայացուցիչ Արմեն Տեր-Տաճատյանը: «Օրինաստեղծ գործընթացը 2010 թվականին» խորագրով առաջին նիստը համակարգեց Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը, իսկ «Ձանգվածային լրատվամիջոցները պրակտիկայում» նիստը համակարգեց Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ներկայացուցիչ Դավիթ Ամիրյանը:

Հաշվի առնելով 2010 թվականի հունիսին կառավարության արած հայտարարությունն այն մասին, թե տեխնիկական դժվարությունների պատճառով թվային վերգետնյա հեռուստատեսության (ԹՎՀ) անցնելուց հետո թվային ալիքների թիվը կլինի ընդամենը 18 Երևանում և 10 մարզերում, այսինքն՝ ներկայումս գործող հեռուստաալիքների թվաքանակի համեմատ չորսով պակաս, լրատվամիջոցների դաշտի փորձագետներն աշխատանքային խումբ ձևավորեցին թվայնացման գործընթացի թե տեխնիկական, թե սոցիալական խնդիրները քննարկելու նպատակով: Չնայած որ հեռուստատեսության թվայնացումը որպես կանոն հիմք է ստեղծում հեռուստաալիքների թվաքանակի բազմապատկման և ծրագրերի բազմազանեցման համար, կառավարության մոտեցումը լուրջ վեճի տեղիք է տվել այն հարցում, թե կոնկրետ ինչ

արդյունքի է հանգեցնելու թվայնացումը Հայաստանում: Քննարկման մասնակիցները նսեմացրեցին հաճախականությունների առկայության կարևորությունը՝ որպես իրավաչափ խոչընդոտի գոյությունը, միաժամանակ հարցականի տակ առնելով ալիքների թիվը կրճատելու անհրաժեշտությունը և լուրջ մտահոգություն հայտնելով հեռարձակման արտոնագրերի շնորհման գործընթացի թափանցիկության առնչությամբ: Հաշվի առնելով, որ լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող մարմինների, մասնավորապես՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) անկախության խնդիրը 2010 թվականին էականորեն չի լուծվել, գնալով ավելի ակնհայտ է դառնում արտոնագրման գործընթացի քաղաքականացումը: Նկատի ունենալով այն փաստը, որ ՀՌԱՀ-ի նկատմամբ վճռորոշ ազդեցություն ունի իշխող կուսակցությունը, արտոնագրման ընթացակարգի վերաբերյալ ՀՌԱՀ-ի որոշումների անկողմնակալությունը և արդարացիությունը շարունակում են հարցերի տեղիք տալ: Լրատվամիջոցների փորձագետները համակարծիք էին առ այն, որ գործող օրենսդրությունը, որը հեռարձակողներին ըստ էության արգելում է առանց ԹՎՀ արտոնագրի բովանդակություն հեռարձակել ինտերնետի, արբանյակի և բջջային հեռախոսային ցանցերի միջոցով, սատարում է հեռարձակվող լրատվամիջոցների մեծ մասին վերահսկելու կառավարության ջանքերին:

Այս բանավեճի առանցքային հարցադրումներից է անուղղակի գրաքննություն իրականացնելու կառավարության փորձը: ՀՌԱՀ-ը 2010 թվականին մշակել է **«Հեռուստառադիոհեռարձակողների գործունեության էթիկական սկզբունքների խարտիա»-ն**, որը ստորագրել են խոշորագույն հեռուստարձակություններից 11-ը: Լևոն Բարսեղյանը գտնում է, որ Խարտիան պարունակում է աղոտ ձևակերպումներ, որոնք կարծես ուղի են հարթում գրաքննության համար և էլ ավելի խորացնում բովանդակություն կարգավորելու ներկայումս ընթացող գործընթացը: Վերլուծելով սույն խնդրին առնչվող հարցադրումները՝ քննարկման մասնակիցները կարծիք հայտնեցին, թե տվյալ նախաձեռնությամբ փորձ է արվում սասանել մամուլի ինքնակարգավորման սկզբունքները և լրացուցիչ հիմքեր ընձեռել շահարկումների համար: Այնուհանդերձ, չնայած որ իրավաստեղծ այս փորձի վտանգավորությունն ակնհայտ է, առավել կասկածահարույց է դրա հետևանքով հնարավոր քաղաքական ազդեցությունը և մամուլի ազատության սահմանափակումը: Հղում անելով Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի վերջին զեկույցին՝ Աշոտ Մելիքյանը մատնանշեց ճնշման այն ոչ ֆորմալ մեխանիզմները, որոնք շարունակաբար օգտագործվում են իշխանությունների կողմից հեռարձակվող լրատվամիջոցների նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով: Չնայած որ լրագրողների նկատմամբ բռնի հարձակումների հաճախականությունը 2010 թվականին նվազել է, կառավարության կողմից անուղղակի ազդեցության գործադրման դեպքերի թվաքանակն ավելացել է թե մասշտաբային, թե որակական առումներով: Ուսումնասիրելով մամուլի ազատության սահմանափակման մի շարք դեպքեր՝ Մելիքյանն առաջարկեց ոտնձգության տեսակների էական սահմանազատում ըստ դրանց բնույթի: Նրա դասակարգմամբ, լրագրողներին սպառնալը և ահաբեկելը, ինչպես նաև՝ կառավարության հասցեին հնչող քննադատությունը սահմանափակելու նպատակով իրավական ընթացակարգերին միջամտելը «ճնշում է լրատվամիջոցի և վերջինիս աշխատակցի նկատմամբ», մինչդեռ «տեղեկատվություն ստանալու և տարածելու իրավունքի խախտում» ցանկը ներառում է այն դեպքերը, որոնցում լրագրողներին խորհուրդ է տրվել ձեռնպահ մնալ քաղաքականապես զգայուն տեղեկատվություն ստանալուց և տարածելուց:

Գիտակցելով առկա մարտահրավերները, մասնավորապես՝ քաղաքական բաց լուսաբանմանը և վերլուծությանը կառավարության արձագանքի անկանխատեսելիությունը, լրագրողներից ոմանք նախընտրում են հեռու մնալ այնպիսի թեմաներից, որոնց համար իրենք կարող են պատժվել կառավարության կողմից: Այսօրինակ ինքնագրաքննության հետևանքները և ընդգրկուն են, և ծանրակշիռ: Ա1+ անկախ հեռարձակողի արտոնագրի կասեցված մնալը՝ չնայած նրա օգտին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից 2008 թվականին կայացված վճռին, նսեմացնում է քաղաքականապես զգայուն խնդիրներ լուսաբանելու լրագրողների պատրաստակամությունը: Փորձագետները պնդեցին, թե 2010 թվականին արտոնագրերից չգրկվելու նպատակով հեռարձակողները շարունակել են սուր ինքնագրաքննություն իրականացնել: Դա անկողմնակալ տեղեկատվության և հանրությանը հուզող հարցերի շուրջ տարաբնույթ տեսակետների հասանելիությունը սահմանափակելու մտահոգիչ միտումներից է, որը

վերջին հաշվով սասանում է օրակարգ սահմանելու, քաղաքականություն ձևավորելու և քաղաքականության ձախողումների և սխալների համար կառավարությունից պատասխան պահանջելու գործում լրատվամիջոցների կենսական դերակատարումը: Հարկ է հիշատակել, որ Մեսրոպ Հարությունյանն ըստ էության պնդեց, թե «իշխանությունները հեռարձակող լրատվամիջոցներն ընկալում են որպես պրոպագանդայի գործիք՝ հաշվի առնելով այն փաստը, որ դրանք են երկրի ամենատարածված լրատվամիջոցները»:

Հիմնովին սխալ կողմնորոշմամբ իրականացվող վերոհիշյալ քաղաքականությունների շտկումը թերևս բարդ է լինելու, սակայն փորձագետները ներկայացրեցին մի շարք առաջարկություններ, որոնց միջոցով կարելի է փոխել իրավիճակը: Նրանք կոչ արեցին Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերջ տալ ոտնձգություններին, անուղակի ճնշումներին և լրագրողների նկատմամբ ֆիզիկական հարձակումներին, հանդուրժել անկողմնակալ լրատվությունը և վերլուծությունը, փոփոխությունների ենթարկել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը՝ ապահովելու լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող մարմինների ազատությունը կառավարության ցանկացած միջամտությունից, և կառուցողական երկխոսության մեջ ներգրավվել լրատվամիջոցների անկախ փորձագետների և քաղաքացիական հասարակության հետ: Քննարկման մասնակիցները նաև ներկայացրեցին կոնկրետ քայլեր և գործնական առաջարկություններ, որոնց հիման վրա քաղաքականություն ձևավորողները կկարողանան կատարելագործել թվայնացման գործընթացը:

- Հանրության տեղեկացման նպատակով հրապարակել հաճախականությունների աուդիտի արդյունքները
- Անցումային ողջ գործընթացում թույլատրել հեռարձակման անալոգային ծառայություններ մատուցողների գործունեությունը՝ այնքան ժամանակ, մինչև մուլտիպլեքսների մասնավոր օպերատորները կարողանան իրենց փաթեթներում ներառել նրանց թվային ազդանշանները
- Ուժը կորցրած ճանաչել այն նորմերը, որոնք կարող են արգելել առանց ԹՎՀ արտոնագրի բովանդակության հեռարձակումն արբանյակային և մալուխային համակարգերի միջոցով, ինչպես նաև՝ նպաստել ինտերնետի ազատության երաշխավորմանը՝ ստեղծելով ինտերնետի և հեռախոսային ցանցերի միջոցով բովանդակության հեռարձակման առավել ազատական միջավայր
- Ինտերնետի և արբանյակային կապի միջոցով հեռարձակում իրականացնողների համար սահմանել արտոնագրման պարզ ընթացակարգ
- Իրականացնել իրազեկության բարձրացման ընդգրկուն համապետական ծրագիր, որի միջոցով քաղաքացիները կտեղեկացվեն թվային հեռարձակման գործընթացի, վերջինիս ժամկետների, անհրաժեշտության և կարևորության մասին
- Մշակել ամբողջական փաստաթուղթ, որում մատնանշված կլինեն ԹՎՀ-ի անցումային ժամանակահատվածում, ինչպես նաև 2015 թվականին անալոգային հեռարձակումն անջատելուց հետո Հայաստանի կողմից իրականացվելիք միջոցառումները